ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ. Ախուրյան, (0312) 70885 , 091 420 451 lusinmat001@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

05 օգոստոսի 2021 թվականի թիվ 49

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 5-ի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից /ՀՏԶՀ/ իրականացվող սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում ծրագրի առաջարկ ներկայացնելու մասին

2.Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգմամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԱխուրյան խոշորացված համայնքի Բասեն բնակավայրում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքներ» դրամաշնորհային ծրագրի սպասարկման նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համար արտաբյուջետային հաշիվ բացելու մասին

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում/բնակավայր Ախուրյան/ Գառնուկ և Գոհար Քարտաշյանների կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված հասարակական նպատակային նշանակության շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու

մասին

4.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համար հակակարկտային կայանների ձեռքբերում» ՇՄԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնումը չկայացած հայտարարելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 147-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ժ. ԳԱԲՈՅԱՆ

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հ. ՄԱԹՈՍՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

05 օգոստոսի 2021 թվականի
գյուղ Ախուրյան